


Բեյքերի հանդիպումը Բեսամերսնիխի եւ Գորբաչովի հետ

Հինգշաբթի երեկոյան Մոսկւոյ ժամանելով ԱՄՆ-ի պետքարտուղար Զեյնս Բեյքերն առանց ժամանակ կորցնելու, գործնական գրույցի մեջ մտաւ իր պաշտօնակցի Ա. Բեսամերսնիխի հետ, օրակարգում ունենալով մի ամբողջ հարցերի ծրար. Մերձավոր Արեւելք, զենքերի կործանում, Աֆղանստան եւ երկկողմանի հարաբերություններ:



Մոսկւոյ մեկնելու պահին Զեյնս Բեյքերը: Մինչ այդ նա եղել էր Ռիպոլիտ, Բուլիշոյն, Կահիրեում, Թեյ-Ապիլում եւ Դամասկոսում, ուր ընդունել էր նախագահ Հաֆեզ Ասադի կողմից եւ ունեցել էր յոթամսյա խոսակցություն արաբ-խորաշխարհի տագնապի շուրջ:

Այդ առաջին հանդիպման երկու ժամերը բավարար չգտնելով, երեկ առավոտյան նրանց միջև կայացավ երկրորդ հանդիպումը, որի ավարտին պետքարտուղարը լրագրողներին տված իր կարծիքն ուղիղտ արտահայտեց, որ թեւս քննարկված տարբեր հարցերի շուրջ տեսակետների որոշ նույնություն կար, սակայն առկա էր նաեւ խորը տարբերություն՝ ինչ վերաբերում է զենքի կրճատման հարցին, իսկույն ավելացնելով, որ մինչև այդ տարակարծությունները չհարթվեն, չի կայանա Գորբաչով-Բուշ զագաթաժողովը:

Ավելի ուշ Զ. Բեյքերը ընդունվեց պրեզիդենտ Գորբաչովի կողմից, քննարկելով նույն հարցերը՝ ավելի ընդհանուր

Խորհրդա-թուրքական նոր ղայմանագիր

Ավարտելով Խորհրդային Միության կատարած հինգօրյա այցը, պրեզիդենտ Թուրքոս Օզալն այսօր վերադառնում է Անկարա: Նրա այցի կարևորությունն ակնհայտ էր կողմերի համար: Դրանով հանդերձ, թուրքական մամուլն ու հեռուստատեսությունը անսովոր զրուսվածություն են հանդես բերում, լուր են նաեւ ընդդիմադիր կուսակցությունները: Խուսքը վերաբերում է մարտի 12-ին կնքված «Բարեկամության, բարի կամքի եւ փոխադարձ համագործակցության» խորհրդա-թուրքական պայմանագրին: Թուրքական հեռուստատեսությունը պայմանագրին անդրադարձավ ոչ թե ինֆորմացիոն գլխավոր ծրագրով, այլ կայանի փակումից առաջ տրվող «կարճ լուրեր»-ի ժամանակ եւ բավարարվեց հաղորդագրությունով, թե «դրանով անվերապահորեն հաստատվում են երկու երկրների միջև 1920 թվականից ի վեր կնքված բոլոր տեսակի պայմանագրերը»: Ըստ «Հյուրիչեք»-ի՝ «Օզալ-գորբաչովյան բանակցությունների ժամանակ «չհարձակման եւ փոխադարձ վստահության» պայմանագիր կնքելու մտադրություն է եղել: Սակայն, նկատի ունենալով, որ դրանով հայերը (կենտրոնի վրա) ճնշում գործադրելու հնարավորություն կստանան, որոշվել է այն ձեւակերպել «Բարեկամության, բարի կամքի եւ փոխադարձ համագործակցության» պայմանագրի անվան տակ»: «Չհարձակման եւ փոխադարձ վստահության» խորհրդա-թուրքական պայմանագիր կնքելու փորձեր, անցած տարիների ընթացքում էլ եղել էին, բայց ապարդյուն: Ներկա պայմանագրով ապահովվում է կողմերի տարածքային ամբողջականությունը եւ նրանց տրվում սահմանների անձեռնմխելիության վերաբերյալ երաշխիքներ: Թուրքական հեռուստատեսությունը պայմանագիրը բնութագրվեց որպես ձեռքբերում եւ շեշտեց, որ մինչև օրս չէր հաջողվում ստորագրել նման պայմանագիր: Համեմատյան դեպքս Թ. Օզալն իզուր չէր ասում, թե ինքը «բանակցություններից անչափ գոհ է»:

Վուրան Վուրալը այցելում է Երեւան

Ըստ «Հյուրիչեք»-ի, Մոսկւայում հա-վատարանագրված Թուրքիայի դեսպան Վուրան Վուրալը օրերս այցելություն է կատարելու Երեւան: Հայ եւ թուրք պատասխանատուները առաջին անգամ առիթ են ունեցել շփման մեջ մտնելու շուրջ մեկ տարի առաջ՝ Ստամբուլի պատրիարք Ընդրիք արքեպիսկոպոս Գալուստյանի մահվան առիթով: «Դեսպան Վուրան Վուրալը»- գրում է թերթը. «Խորհրդային Հայաստանի որոշ բարձրաստիճան ղեկավարների հետ հանդիպել էր ճաշկերույթի ժամանակ եւ վերջիններս նրան հրավիրել էին Հայաստան: Սակայն ոչ պաշտոնական բնույթի փոխհարաբերությունները Թուրքիայի արտգործնախարարությունում զգալի զիմարդության են հանդիպում: Ելլ անհ, նախարարությունը դեսպանին լռակցաց հասկացնում է, որ «ոչ պաշտոնական շեփումները ավելորդ դժվարություններ են հարուցում»: Վուրան Վուրալը մոտ օրերս, հարմար պահին մեկնելու է Երեւան: Դեսպանի այցը Խորհրդային Միության եւ Թուրքիայի միջև առկա հոգեբանական կարեւոր պատճեններից մեկը նա հաղթահարելու նախադրյալ է ստեղծում: Ի վերջո, Թուրքիան Խորհրդային Միությունում հետզհետեւ աճող ազդեցություն է ձեռք բերում, ինչը կամա թե ակամա անդրադառնալու է երկու երկրների ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հարաբերությունների վրա»:

Բուշը Սր. Դոմինիկ կղզուց նախագգուշացնում է Իրաքին

Նախագահ Զորջ Բուշը, որը սրբ. Դոմինիկում (Կարիբյան կղզիներ) երկօրյա զագաթաժողով էր գումարում նախագահ Ֆրանսուա Միտերանի հետ, խիստ նախագգուշացում ուղղեց Իրաքի կառավարությանը, նրան մեղադրելով երկրի ներսում Սադդամ Հուսեյնի իշխանության ընդդիմադիրների նկատմամբ ուղղաթիռներով եւ օդանավերով պատժիչ գործողություններ ձեռնարկելու գործում: Նա հիշեցրեց, որ զինադադարը դեռեւս պաշտոնական չէ եւ կարող է ցանկացած պահի խզվել...

Դաշնակիցների ռմակոծիչների կողմից: Մանր բախումները շարունակվում են նաեւ Իրաքի հյուսիսային շրջաններում, որտեղ բուրգ ագատամարտիկները մի կողմից հայտարարում են, թե քրդաբնակ շրջանների 80 տոկոսը գտնվում է իրենց տնօրինության տակ, մյուս կողմից՝ թե իրաքյան բանակն իրենց դեմ օգտագործում է նապալմ հրկիզող ռումբեր: Իր հերթին, իրաքյան շիաների հոգեւոր պետը Ալաթուլլահ Հաքիմը Թեհրանից երեկ հայտարարեց, թե հնարավորեւելւան Իրաքում հարյուրավոր բանակայիններ միանում են ապստամբներին:

Մյուս կողմից, Իրանի մայրաքաղաք Թեհրանից երեկ երեկոյան հաղորդեցին, որ իրոք, իրաքյան բանակը խիստ հաշվառարող է տեսնում շիա ընդհատ զանգվածների նկատմամբ: Ծանապարհորդների կողմից Թեհրան քերված լուսանկարները ցույց են տալիս, օրինակ, Բարբելա սըրբավայր քաղաքի փլատակներն ու փողոցներում այրված հրասայլերի մնացորդները, այնինչ այդ քաղաքը խնայվել էր

Միտերան-Բուշ հանդիպումից հետո կողմերը հայտնել էին, թե իրենց տեսակետները լրիվ համընկնում էին արժարժված հարցերի եւ հատկապես Մերձավոր Արեւելքում խաղաղության նոր ծրագրի շուրջ, եւ թե ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի միջև հայացքների նման նույնություն դեռ չի եղել որեւէ ժամանակ:

Զավախքցիները դեռ են նշանակված Ղրեֆեկսներին եւ լեզվի մասին օրենքին

Մարտի 12-ին Ախալցախում տեղի է ունեցել հանդիպում Ախալցախի «Զավախք» ժողովրդական շարժման, Բոզդանովկայի «Փարվանա» հասարակական կազմակերպության, հասարակական այլ կազմակերպությունների, տնտեսությունների ղեկավարների լիազոր ներկայացուցիչների, հարակից՝ Ասպինձա, Ախալցխի, Աղիզան շրջանների ղեկավարների եւ Վրաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներից կազմված պատվիրակության միջև: Վրաստանի Գերագույն խորհրդի պատվիրակության հիմնական նպատակը եղել է արդեն նշանակված պրեֆեկտներին ընդունել տալը: Հայերը չեն համաձայնել նշանակված պրեֆեկտներին, որովհետեւ

ազգաբնակչությունն առաջարկել է իր թեկնածուներին: Հայերը բարձրացրել են նաեւ դատավարության եւ գործավարության լեզվի օրենքի հարցը: Հանդիպման ժամանակ արժարժվել է նաեւ Վրաստանի վարած ներքին քաղաքականության հարցը, այն որակվել է որպես հակաժողովրդական եւ հակադեմոկրատական, վրաց եւ մյուս ժողովուրդների միջև անըզպետ առաջացնող: Վրաստանի Գերագույն խորհրդի պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաեւ ժողովրդական զանգվածների հետ, որոնք հաստատել իրենց ներկայացուցիչների պնդումները: Սնփ. թղթ.

Լեռնային Ղարաբաղը բողոքում է Գորբաչովի հայտարարության դեմ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բացասաբար ընդունեց պրեզիդենտ Մ. Գորբաչովի դիմումը՝ ուղղված Ադրբեջանի ու ԼՂԻՄ-ի ժողովուրդներին: Ուրբաթ օրը հազարավոր ստեփանակերտցիներ հավաքվեցին քաղաքի կենտրոնական հրապարակում, որտեղ կեսօրին տեղի ունեցավ հանրահավաք, որին մասնակցեցին 10 հազարից ավելի մարդ: Ելույթ ունեցողները մեղադրեցին ԽՍՀՄ պրեզիդենտին այն հայտարարության համար, թե իբր ԼՂԻՄ-ը Ադրբեջանի անբաժանելի մասն է: Նրանց կարծիքով, դա Ադրբեջանի ղեկավարությանը հնարավորություն է տալիս ԼՂԻՄ-ի հայ բնակչությանը տեղահանելու: Մեկ ժամ անց գորքը ցրեց հանրահավաքը: Բողոքի ցույցեր տեղի ունեցան նաեւ մարզի այլ շրջաններում: Ստեփանակերտի բոլոր ձեռնարկություններն ու ուսումնական հաստատությունները ի պատասխան Գորբաչովի հայտարարության՝ միօրյա գործադուլ հայտարարեցին:

Պատգամավորները արժանապատիվ նստաշրջան էին ղահանջում

Փետրվարի 14-ին ՀՀ Դաշնակցության Հայ դատի հանձնախումբը եւ Հ.Հ.Դ. «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը նստաշրջան կազմակերպեցին Գերագույն խորհրդի նախագահության շենքի առաջ: Նրանք պահանջում էին հրավիրել նստաշրջան եւ ապօրինի ճանաչել 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերը: Հայաստանի խորհրդարանի 106 անդամներ դիմել են Գերագույն խորհրդի նախագահությանը քննարկելու եւ չեղյալ համարելու պայմանագրի նշված կետերը արտահերթ նստաշրջանում: Գերագույն խորհրդի նախագահությունը երեկ հրավիրել էր պատգամավորական խորհրդակցություն, որին ներկա էին նաեւ Հ.Հ.Դ. հայաստանյան կազմակերպության եւ նստաշրջան կազմակերպած «Նիկոլ Աղբալյան» միության ներկայացուցիչներ: Հ.Հ.Դ. ներկայացուցիչը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1921 թ. «Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի քաղաքական ու միջազգային-իրավական գնահատականի վերաբերյալ» որոշման նախագիծը: Եղան թե՛ր ու դեմ կարծիքներ, որտեղ շատ բույլ հնչեցին նախագծի կողմնակիցների առաջ քաշած փաստարկները: Լեռն Տեր-Պետրոսյանն ամփոփիչ ելույթում նշեց, որ այսօր, այս աշխարհաքաղաքական իրավիճակում այդ հարցի հապճեպ բարձրացումը քաղաքական շահարկում եւ արկածախնդրություն է, ինչը հղի է Հայաստանի եւ հայ ժողովրդի անվտանգության համար լուրջ հետևանքներով: Խորհրդարանի նախագահը կոչ արեց այն պատգամավորներին, որոնք դիմումներ են հղել նստաշրջանում 1921 թ. ռուս-թուրքական պայմանագիրը վերանայելու վերաբերյալ, գիտակցել հարցի լուրջությունը եւ հետ վերցնել դիմումները: Միաժամանակ նա առաջարկեց վերը նշված հարցի փոխարեն քննարկել հայ-թուրքական ներկա հարաբերությունների հարցը: Թերթի առաջիկա համարում կկարդաք խորհրդակցության մանրամասների մասին:

ԱԳԳ

Կրթական հոգսեր

ԱՐՅԱԽ

Հայտնի է, որ Արցախը միշտ էլ ունեցել է հարուստ մշակույթ, բազմաթիվ կրթական օջախեր: Շուշի քաղաքը Անդրկովկասի մշակութային կենտրոններից մեկն է եղել: Շուշիում գրատպությունն ավելի շուտ է ըսկալվել, քան Թիֆլիսում, Բաքվում և Անդրկովկասի մյուս քաղաքներում:

1828 թ. այնտեղ լույս է տեսել տպագիր առաջին գիրքը՝ «Պատմություն սուրբ գրքի»:

Խոշոր երեսույթ էր նաև 1864 թ. Շուշիում Մարիամ Հախումյանի ջանքերով օրհորդաց հայկական միջնակարգ դպրոցի բացումը, որը միակն էր մեր լեռնաշխարհում, որտեղ կարող էին սովորել հայ աղջիկները: Շուշիի դպրոցներում տարբեր ժամանակներում դասավանդել են հայ մշակույթի երախտավորներ Պ. Շամշյանը, Պ. Պետրյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Լեոն, Հր. Աճառյանը... Վ. Փափազյանը միաժամանակ Շուշիում հրատարակող «Ղարաբաղ» թերթի խմբագիրն էր:

Տպագրական գործի զարգացմանը մեծապես նպաստեց հայոց թեմական դպրոցի տպարանի ստեղծումը, ուր հրատարակվում էին դասագրքեր, գիտական ուսումնասիրություններ, երուսկական գրականությունից արված թարգմանություններ: Իսկ Արցախի դպրոցներում և մշակույթի կենտրոններում աշխատում էին արցախցի մտավորականներ, որոնք բարձրագույն կրթություն էին ստացել երուսկական հանրահայտ կրթօջախներում:

1882 թ. կազմավորվել է Շուշիի Խանգալի միջնակարգ դպրոցը:

20-ական թվականներից հետո, երբ Արցախում իսպառ զերացվեց եկեղեցու գործունեությունը, հայապահպանման և մանուկ սերունդի հայեցի դաստիարակման գործը հիմնականում ծանրացավ Արցախի դպրոցների և լուսավորության ու մշակույթի բնագավառում աշխատող մտավորականության ուսերին:

Չնայած Արցախի կողմից վարած հակահայ քաղաքականությանը, արցախցիներին հաջողվեց շարունակել մաստաղ սերունդի հայեցի դաստիարակության գործը:

Այսօր Արցախը, որ հայ է մնացել և իր մեջ ուժ գտել պայքարի ելնել իր ազգային

սովորությունների, լեզվի, մշակույթի, խղճի և հավատի տաճարները սրբապղծողների դեմ, ամենից առաջ շնորհիվ արցախյան դպրոցի, որը համեստորեն և նպատակապես, կատարել է իր գործը և այսօր էլ կանգնած է պայքարի առաջին շարքերում:

Սակայն արցախյան դպրոցը բազմաթիվ կենտոն հարցեր ունի, որ ժամանակ է առցիալիզմից և աղբյուրազանց «տերերից»:

Ստեփանակերտում, որտեղ վիճակը, համեմատած ինքնավար մարզի մյուս քնակավայրերի հետ, բարվոք է, 220 տեղի համար նախատեսված մանկապարտեզները համախում են 350-400 երեխաներ: Դրանք փաստորեն վերածվել են «պահպանակներին»: Քաղաքի 16 նախադպրոցական հիմնարկներից 7-ը տեղավորված են ոչ տիպային՝ մի կերպ հարմարեցված շենքերում: Ծավալի վիճակում է երեխաների բուժսպասարկման և հատկապես սննդամթերքներով ապահովելու գործը:

Քաղաքի դպրոցներում, որոնք նախատեսված են 5890 աշակերտի համար, սովորում են 9247 աշակերտ: Վատ պայմաններում են գտնվում հատկապես թիվ 1, 3, 7, 8, 10, 11 դպրոցները: Հաշվի առնելով ժամանակակից պահանջները, միայն Ստեփանակերտում պետք է կառուցել առնվազն 4 նոր դպրոց՝ յուրաքանչյուրը 1000 տեղով: Դասարանների ծանրաբեռնվածության և ուսուցման քաղամեթոդ եղանակը հանգեցնում է նրան, որ շատ դպրոցներում արտադասարանական աշխատանքներ չեն անցկացվում, խախտվում են սանիտարական նորմերը, օրվա ռեժիմը, դպրոցական կանոնադրությունը, աշխատանքային վերահսկողությունը և այլն:

Չափազանց դժվար է Արցախի մշակույթի և դրա մշակների վիճակը: Ռազմական արտակարգ դրությունը ինքնավար մարզը զրկում է բոլոր տեսակի միջոցառումների, հանդեսների, կինոցուցադրումների, ներկայացումների և համերգների կազմակերպման և անցկացման հնարավորությունից:

Երեքամյա այս վիճակը հանգեցրել է նրան, որ հատկապես տեղական քուլտուրայի ֆինանսավորող հիմնարկությունները սնանկացել են:

մեկի 17 աշակերտներ խառը անուսուցություններից ծնված երեխաներ են: Ծանկալի է, որ մեր եղբայրների ու քույրերի ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվությունը հետ պահեին նրանց երեխաներին օտարալեզու դաստիարակություն տալու պարսպակի սովորությունից:

ԱՍԵՓԱՆԱԿԱՆ

ՄԵՐ ՎԱՐԸ ԱՅՍՕՐՎԱ ԱՐԶԱԳԱՆՔՆ Է

Երկրաշարժը, թերևս ամենից շատ վրասա հասցրեց երեխաների ուսմանը, առավելապես զեղազիտական դաստիարակությանը: Ստեփանակերտի դպրոցներում ուսուցումը հիմնականում տարվում է քակարային պայմաններում: Երջանային պիտանք տանը կից դպրոցներում գործում են 53 խմբակներ 1071 աշակերտներով: Մշակութային կյանքը թիչ թե շատ բարվոք է շրջանի որոշ գյուղերում: Կուրբանի դպրոցում գործում է մանկական թատրոն և սանտուրի խմբակ: Գարեգին Քեյի «Աշխարհն ինձանով է սկսում» կատակերգության բեմադրությամբ նրանք ինքնագործունեության համամիտքեական փաստառուտ արժանացան խրախուսանքի: Նրանց հետ մրցանակի արժանացան նաև Գյառզյանի միջնակարգ, դպրոցի ակտիվիստների խումբը: Այս տարի կանցկացվի «Ազատ և անկախ Հայաստան» խորագրով մրցույթ, կկազմակերպվեն կիրառական արվեստի, կերպարվեստի, լավագույն աշխատանքների ցուցահանդես-վաճառքներ: Սակայն այս ամենով հանդերձ անցումային դժվարին ժամանակներ են ապրում մանկական կազմակերպությունները: Լուծարվել է շրջանային պիտանքական կազմակերպությունը, ստեղծվել է «Հույս» մանկապատանական կազմակերպության շրջանային խորհուրդ, իսկ դպրոցներում «Հույս» չոկատներ: Բայց, ցավոք, սկստական շարժումը շրջանում

Շատերն ստիպված փոխել և փոխում են իրենց մասնագիտությունը: Մա ոչ միայն այսօր, այլ նաև հետագայում մեծ վնաս կրերի Արցախի մշակույթին: Արցախյան ռադիոյի և հեռուստատեսության շատ աշխատողներ զինվորական բռնադատության պայմաններում ստիպված էին սևագործ քանվորի աշխատանք կատարել, որպեսզի կարողանան վստահել իրենց հասնապագոյա հարցը:

Մինչև և՛ որ է հասնելու սա: Ինչքա՞ն կարելի է ձգել լարը:

Վերջերս Հայաստանի Հանրապետությունը շանքեր է թափում լուծելու այդ հարցերը, սակայն ահռելի խոչընդոտներ կան կապված արտակարգ իրավիճակի հետ:

Անբարվոք վիճակում է նաև լուսավորության հիմնարկները համապատասխան բարձրորակ մասնագետներով ապահովելու գործը: Չնայած Ստեփանակերտում անգործ ուսուցիչների առկար խումբ կա, այսօր ինքնավար մարզի հեռավոր գյուղերն ու ավաններ ուսուցիչների խիստ կարիք ունեն: Հատկապես պակասում են օտար լեզուների, հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, քիմ-կենսաբանության, ռուսաց լեզվի և գրականության, գրադարանային մասնագետները: Երգ-երաժշտություն, նկարչություն և արվեստագիտություն, քաղաքագիտություն և իրավագիտություն, ֆիզիկական դաստիարակություն ուսուցանում են հիմնականում ոչ մասնագետներ՝ սիբիրականց ցածր մակարդակով:

Մարզը ոչ միայն լուսավորության, այլ հատկապես մշակույթի, առողջապահության, գիտատեխնիկական մտքի մեծ կարիք ունի: Այն կարիք ունի մարդկանց, որք կարողանան դառնալ իսկական առաջատարներ և իրենց ուսերի վրա վերցնեն հոգսերը: Լավ կլիներ, որ մարզում բացվեին մի շարք ինստիտուտների տարբեր բաժիններ, որպեսզի արցախցի երիտասարդը կարողանա համապատասխան մասնագիտություն ստանալ և ստանձնել սեփական երկրի բարգավաճման գործը:

Տնտեսական շրջափակման պայմաններում, երբ աշխարհից, Հայաստանից կտրված Արցախը խարխափում է իր ամենօրյա հոգսերի և ցավերի քառում, նրան անհրաժեշտ է մեր ամրոգչ ազգի ոչ միայն քարոջական, այլ նաև տնտեսական կենտրոնացված օգնությունը:

ԷԴՈՒՐԱԴ ՄՎԿՏՈՒՄՃԱՆ

արժագանք չի գտել, և երեխաները հեռու են կանգնած ֆիզիկական և հոգեվոր անհրաժեշտ դաստիարակությունից:

Աղետի գոտում առանձնահատուկ նշանակություն է ստանում առողջ ազգային մտածողությամբ սերունդ դաստիարակելու գործը: Ձե՛ որ նրանք են կառուցելու մեր վաղվա հայրենիքը:

ԳՈՒԳՈՐ

ԳՅՈՒՈԸ ՎԵՐԱՃՆՎՈՒՄ Է

Մայրատիճան քայքայված վիճակում էր Քարաբերդը: 1962 թվականին կոլտնտեսությունը լուծարվել է, միացել մի այլ ժողովուրդի անվան կոլտնտեսությանը: Լքված գյուղի հողերի մի մասն էլ տնօրինում են Բազումի և զազանբուծական տնտեսությունները: Հայաստանի Հանրապետության հողի և գյուղացիության մասին օրենքների հրապարակումից հետո գյուղը սկսել է վերագտնել իր դեմքը: Քարաբերդում կա 116 տուն, որից 104-ը անձնական օժանդակ մնաստություն են վարում, 48-ը պահում են անասուններ: Նախկինում գյուղը մշակում էր 40 հեկտար կորտոֆի, 11 հեկտար պողատու այգի, ուներ անասնապահական ֆերմա, 400 գլուխ խոշոր և 600 գլուխ մանր եղջերավոր անասուն: Քարաբերդցիները կամաց-կամաց շունչ են քաշում: Գյուղը վերածվում է:

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՅՔ ԴԱՏԱՌԹՅԱՆ ԲՆԱԳՐԱՆԻ ՎՐԱ

Ուշագրավ ցուցադրություն

Հայաստանի պատմության պետական բանգարանը ևս մեկ անակնկալով ներկայացավ այցելուին: Նորարաց ցուցադրանում շարունակվում է 1987-89 թթ. հանրապետության տարածքում կատարված պեղում-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԾՈՒՐԶ

Հրապարակելու խնդրանքով Բնյուրից ստացել ենք սույն կոչը, որին կցված նամակից (ստորագրված «Նախաձեռնող կորիզ» թարտուղար Գասպար Տերտերյանի կողմից) տեղեկանում ենք, որ առ փետրվարի 1991 թվականը այն ստորագրել են Բնյուրից, Հայկից ու Դամասկոսից մի խումբ մտավորականներ, ինչպես՝ Վահ-Վահյանը, Լեոն Վարդանը, Հարություն Մաթյանը, Պեպո Միսնյանը, Հրանտ Գանգրունի, Գեորգ Աճնյանը, Մարտիրոս Գուշաբյանը, Պարույր Երեցյանը, Գեորգ Ծաղրճյանը, Մարգիս Արմենը, Գասպար Տերտերյանը, Անդրանիկ Արարատը, Գեորգ Թեմիզյանը, Ռոբերտ Ծնայեճյանը և ուրիշներ:

Անուշտ, հրատարակվող կոչը չի ներկայացնում համայն սփյուռքի և նույնիսկ ամբողջ լիբանանահայ և սիրիահայ մտավորականության կեցվածքը: Սակայն այս օրերին, երբ օրակարգի հրատապ հարցերից է միաբնական նոր պայմանագրի և ընդհանրապես Խ. Միության կազմի մյանպայմանա խնդիրը, այն ներկայացնում է մի տեսակետ, որին պետք է ծանոթանալ անկասկած:

ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ստորագրեցին...

Խորապես տագնապելով Հայրենիքն ներս ձևատրուող կեղծանախույս և աճածանակ խարխափումներու տանող շարժումներին, որոնք ըստ արժանույն չեն գնահատել Միաբնական նոր պայմանագրության կենսական նշանակությունը Հայաստանի և համայն հայ ժողովուրդի լինելու ինքնահամար... և

Խորապես գիտակցելով՝ Մերձատր Արևելքի հայազարդությունը վիճակում անփոխարինելի դերին՝ Արտերկրի հայության լինելու ինքնահամար... և

Այսու կոչ կ'ընենք՝ Հայրենիքի և Արտերկրի (խորհրդային և արտա-խորհրդային) համայն հայության, որդեգրելու և հռչակելու հետևելով սկզբունքներ և գործելու այս սկզբունքներում համաձայն:

1. - Հայաստանի յարուր Միաբնական նոր պայմանագրության՝ ռազմագիտական նշանակությանը ու հրատապ ստիպողականությանը, հիմնահարց մը հանդիսանալով հայության լինելու ինքնահամար, հարկ է զայն ներթափանցել համաժողովրդական քուլտուրային, հանրաքուլի:

2. Ցարգելով «Մեկ ժողովուրդ, մեկ հայրենիք» համահայկական կարախուր, ճանաչալ Արտերկրի (խորհրդային և արտա-խորհրդային) հայության իրաւունքը՝ առնուազն խորհրդակցական կարգով և իրաքանչիւր հայազարդի տեղական պայմաններու թույլատրած եղանակով մասնակցելու այս հանրաքուլին:

3. Ներկայ կոչով կը քուլարկենք և համայն հայությանը կը հրաւիրենք քուլարկելու ի նպաստ՝ Հայաստանը նոր դաշնակցային կամ համադաշնակցային կազմին մէջ պահելու սկզբունքին, որ ներկայ հանգրուանին՝ միակ երաշխիքն է


- Հայաստանի ամբողջականությունը.
- Հայ ժողովուրդի կենսապահովությունը.
- Հայաստանի տնտեսա-մշակութային հետանկարային զարգացումն ու զօրացումն. և
- Հայաստանի քաղաքական հեղինակության զօրացումն և աստիճանական անկախացման ապահովումն:

Ների արդյունքների ցուցադրությունը: Պետությունը կատարել է ԳԱ ազգագրության ինստիտուտի ներկայացուցչին բաժինը: Ուշագրավ է, որ բաժինը ես ստեղծել և զբաղվում է նորակառույցների շինարարության տարածքներում պատահաբար հայտնաբերված պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ:

Հայագիտական հարուստ նյութերի (տեգեր, նիզակներ, օսգանակներ և հողագործական զանազան գործիքներ, կահ-կարասի, գարդեր) մեջ առանձնահամար է դրվագագարդ մի գավաթ, որը թվագրվում է մ.թ.ա. II հազարամյակ: Այն ժամանակի արվեստի լավագույն վկայությունն է, քանի որ դրվագագատկերները ներկայացնում են ժամանակաշրջանի ծեսերն ու հավատալիքները, արվեստներն ու կենցաղը: Ի դեպ, սա միզ հայտնի դրվագագատկերներից առաջինն է, որ պատկերում է տավիղ:

Ծավոր, ցուցադրված են ունեցած նմուշների փոքրիկ մասը՝ շենքային պայմաններ չունենալու պատճառով:

ՎԱՆՈՒՂԻ ԲԳՊՈՅԱՆ



Մեր սեփ. թղթակիցը ՄԱՆՎԵԼ ՄԻՎՈՅՆԸՆԸ հաղորդում է

ԿԻՐՈՎԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՎ

Հանրակրթական դպրոցների մասին Հայաստանի կառավարության հայտնի որոշումը իր բարերար արձագանքն է գտել նաև Կիրովականում: Քաղաքի թիվ 4 և թիվ 11 օտական դպրոցներում բացվել են երկուական, իսկ թիվ 14-ում՝ մեկ հայկական դասարաններ, որոնցում սովորողներից ավելի քան 20-ը Արցախցից բռնագաղթվածներ են: Եթե նկատի ունենանք, որ քաղաքում բռնագաղթվածների թիվն անցում է 2000-ից, դա այդքան էլ շատ չէ:

Կիրովականի «Գոյապաշար» կանաչների միությունը ուսուցիչների աշակցությանը սկսել է ցերեկույցներ կազմակերպել այդ դպրոցներում, նպատակ ունենալով ամուր հիմքերի վրա դնել երեխաների հայեցի դաստիարակությունը: Նախատեսվում են նաև մրցանակներ (գրքեր, ազգային տարագ)՝ սովազույն կատարողների համար:

Այսուհանդերձ, կա մի ցավալի փաստ. թիվ 4 դպրոցում ծնողների պնդման և բազմաթիվ բողոքներից հետո բռնագաղթված 16 երեխաների համար բացվել է օտական դասարան: Այս տարի նման երեսույթից խուսափելու համար դպրոցում կազմակերպվել է 8 տարեկանների հայերեն ուսուցման խումբ, ուր սովորող 12 բռնագաղթված երեխաները սեպտեմբերին կհաճախեն հայկական դասարաններ: Դպրոցի երկու հայկական դասարաններից

ԲԱՅ ԼԱՍԱԿ ԳՐ. ՔԷՕՍԷԵԱՆԻՆ

Բոստոն, «Պայքար» թերթի խմբագրություն

Հարգելի պարոն Քեօսեան,
1988-ին պայթեց Արցախը, եւ նրա ժայթքումը անմարդկային կրակամարտիչներով սասնեցնել փորձող Կրեմլ-թուրքական «հըր-շեշենի» վայրագություններին հաշորդեց քննվել երկրաշարժը:

Ու Հայաստանը երեքաց:
Երեքաց, ու որպեսզի հիմնահատակ չլինի լրիվ (կեսն արգեն եղել է), աշխարհը նրան ձեռք մեկնեց: Կրեմլի՝ Հայաստանը նորոգելու երկամյա խոստումները սին դուրս եկան, եւ ամերիկահայ գործարար ժամոթեմիցս մեկը հաստատեց համազգայն ասում էր... «Սովիետ Միութեան վրայով բան չեմ կարող ուղարկել: Ուղարկեմ ու մի՞ց ստանամ: Կույնիսկ թուրքիս վրայով կզգիս դատարան: Պետութիւն է կորալ, կտահանեմ»:

Այսպիսի խառնիխուռն ժամանակներ են, եւ այս նեղ վիճակից դուրս գալու համար յուրաքանչյուր քարեկամ ձգտում է մեզ օգտակար լինել, ով ինչով կարող է: Էստրադային երգիչների արքա Շառլ Ազնաւուրը Հայաստանին օգնելու մի ամբողջ օղակ է՝ ստեղծել Սպիտակի փլատակների առաջ արցունքախառն կանգնելուց առաջ եւ «նետո, Ռոզի Արմենը Փարիզի հայտնի ֆիրմայից շեփոքներ է ձեռք բերել, եկել երեսուն ու ինքն անձամբ հանձնել Հայաստանի օդադուռի նվազագիծը, Լեւոն Գաթրճյանը «Հայ Արցախ» երգերի շարք է գրել տողերիս հեղինակի որոշ օգնությամբ, երեսունու համար տվել Արցախի համար, անգամ իր քարեկամների համար սեփական գրպանից տոմսեր գնելով, Հովիկ Գրիգորյանը իր համարգներից մեկը նվիրեց Մուսկվայում հացադուլի միջոցով իրենց միջն աշխարհին ուղղած Վիկտոր Համբարձումյանին, Ջորջի Բալայանին, մյուսներին, Մարթեն Յորգանցը երեսուն իր համարգներից ստացած երեւի ամբողջ գումարի արժողութեամբ մի հսկա ծաղկեպսակ էր Միծեանակաբերդի բարձունք բերել սպրիլի 24-ին:

Գուցե ա՛յս մարդիկ են այն «յաճախ երկրորդական արժեքով էսթրադային երգիչ մը»-ները, որ վերջին մի քանի տարում եկել են Հայաստան ու նրանց մասին երկար-բարակ գրել է Արմենյանը: Բայց չէ՞ որ այս մարդիկ եկել են մասնակցելու Հայաստանի փրկությանը: Այո, փրկությանը, որովհետեւ հիմա մենք 15 ք. ու քաթար-մոնղոլների ժամանակների նախաշնչին ենք, Լեւոնյանների ժամանակների, միայն հինգ այն Լեւոնյանները չիկաներ է ու մի այլ այլպեզու:

Հիմա դառնանք «երկրորդական արժեքով նկարիչներուն», որոնք Հայաստան են այցելել 1988-ի ցնցումից հետո: Մարտիրոս

Մարյանի անվան մրցանակի դափնեկիր Ռիշար Փերանյան, իրանահայ ծովանկարիչ Հարություն Միհասյան, Պետրոս Ապանյան (Հունաստան): Գուցե այս մարդկանց մեղքը այն է, որ ամեն մեկն իր հնարավորության չափ գումար է հատկացրել հայրենիքին, աղետի գոտուն, իր կտավներում պատկերել երկրաշարժը, եւ անցյալ տարի մեկ ամսով բաժնուգործը թողած եկել «սոված-ծարավ» Հայաստան ու՝ Կրիմ, որպեսզի նկար անի Այվազովսկու քաղվելիք քանդակարանի համար, Հայաստանի համար, որպեսզի Արցախ ու Հայաստան նկարի ու ցուցադրի արտասահմանում, ինչպես օրինակ, Փարիզի Ֆորուր Սենտ Օնորե հայտնի ցուցասրահում (Փերանյան): Կամ իր ֆրանսուհի տիկնոջով նրանց միացած, երկրաշարժի առաջին օրերից այստեղ «Սոս Արմենի» նկարները բաժանող Կող-Արմեն Մուրաֆյանը, որը երեսունու ու Մուսկվայում քացել է իր հոր, երեւի ձեռ կարծիքով նույնպես «երկրորդական արժեքով նկարիչ մը», Ջորջի Մուրաֆյանի ցուցասրահը: Չգիտեմ, ինչու եք ամաչել, անուններ չեք տվել: Մեր իմացած «երկրորդական» անունները սրանք են եղել, որոնց հետ ըստ ձեզ «ածան շաղակրատանքներ» է արել Արմենյանի թղթակիցը, տվյալ դեպքում ձեր խոնարհ ծառա տողերիս հեղինակը:

Առանց փաստերի խոսելուց հետո այն-նուհետեւ անցնում եք «փաստերին»:
Երեսունու գազի պայթյունից տուն է ավերվել: Արմենյանը տվել է պաշտոնական հաղորդագրություն, ասելով, որ «ամենահավորը կան մարդկային զոհեր եւ բազմաթիվ վիրավորներ»: Եթե հաղորդման տվյալ պահին խմբագրությունը հնարավորություն չի ունեցել ճշտելու թիվը եւ օգտագործել է «բազմաթիվ» բառը (եթե թիվն ասած լիներ ի՞նչ կփոխվեր աշխարհում), նշանակում է, արդյոք, թե դուք այսպես պիտի մեկնաբանե՞ք «բանաստեղծական կարգերու» օրնուս լրատուսիներ այսպես կը կատարուր... նույն ձեռով կը կատարուի այսօր անկախութեան հռչակագիրն էստեղ ալ»:

Այ քեզ քան- Այդքան մտահոգված էիք, մի քանի ցուլար ուղարկելիք այդ տուժածների ընտանիքներին:
Թե չէ, էդ նույն բանաստեղծական կարգերը չէի՞ն, որ այս յոթանասուն տարվա ընթացքում չէիք տեսնում ու միայն ըզ-բաղված էիք «մայր հայրենիք... մայր հայրենիք» կանչելով, հերթ չտալով ուրիշներին: Թե՛ միայն «խորհրդային քաժե-րին» էր մեղավոր, որ մայր հայրենիքից մեզ մտա եկած նյութերը «թշնամի» դաշ-նակցականներին ակուր կամ միություններ

չէին գնում:
Թե չէ՛ սովորեցնում եք:
Արմենյանը ի՞նչ անավոր հանցանք է գործել, որ գրել է, թե քաղաքացիների պաշտոնակատարը «դիմում կատարած է իր պարտականություններից ազատելու համար»: Ոչ, ասում եք, պիտի գրեր՝ հրաժարագիր է տվել: Նույնը չի՞ն:

Չե՛ր հողվածում մի քանի խորհուրդներ եք տվել, որոնք կրկնելու հարկ չկա: Մի խորհուրդ էլ ես եմ ուզում տալ: Արմենյանը 1967 թվականից օրական 12-15 մեքենագիր էլի սահմաններում լուրեր է հաղորդում սփյուռքի հայկական թերթերին՝ անվճար, առանց շահի: Այդքան լուրեր չի տպագրում ինձ ծանոթ սփյուռքահայ ոչ մի թերթ, եւ չի հաղորդում ոչ մի ռադիոկայան՝ օրական: Այդ ծավալի համար ՏԱՍՍ գործակալությունից «նվաճված» է երկու ժամ ժամանակ, եւ այդ քանակից երկու ժամը չկորցնելու համար հնարավոր է, որ նյութերի մեջ «ծավալախախտումներ» լինեն: Այդպես է եղել ձեր «հայտնաբերած» ժամանակում, հիմա էլ կլինի: Այլպես ժամը կկորցնեք եւ օրվա ընթացքում ձեզ կտանք մի քանի նյութ կամ ընդհանրապես չենք տա: Կարծում եմ, որ այսպիսի լայն ընտրության համար դուք պիտի գոնե մեկ անգամ շնորհակալություն հայտնեիք այս անգամ... 24 տարիների ընթացքում, եթե, իհարկե, օգտվում եք մեր նյութերից: Եթե չեք օգտվում, ապա, չեմ հասկանում, ինչու է... սայլի տեղ սեկվորը ճռում:

Եւ եթե՛ հարմար չեք գտել շնորհակալություն հայտնելու կարծում եք, թե Արմենյանը պարտավոր է այդ անելու, ապա, փաթե Աստծո, երկրագնդում ինչն է ավելի աստու, քան հեռատիպը: Ձեզ համար թղթակցությունը լրացնելու համար նույն պահին կարող եք հարցում անել: Դժվար է՞ դիմեք Արիիկ Մրասկյանին, նա կօգնի:

Ինքս կարող եմ ձեզ շնորհակալություն հայտնել նախ այն քանի համար, որ պատիվ եք արել մեզ դիտողություններ անելու, որոնց մի մասը ընդունում ենք, անշուշտ, քայքայ թե որոնք, պահում եմ «երկրորդական կարգի արքիստներու» շարքում: Եւ երկրորդ՝ շնորհակալություն, որ «Պայքարում» տպագրած ձեր «Ոգիին հետ նորոգել նախ բառամբերը» հողվածը գեներել է իմ քարեկամ Հակոբ Ավետիսյանը իր՝ երեսունու լույս ընծայվող «Ազգ» թերթում: Այլպես ինչպես պիտի իմանայի ձեր հոգանքի մասին հայրենի գազի պայթյունների, պաշտոնափոխությունների եւ մեր բառամբերը չտկելու վերաբերյալ, մանավանդ որ այս 24 տարիների ընթացքում, ի տարբերություն ուրիշների, ձեզ Արմենյանում չենք տեսնել գոնե... մեկ անգամ:

Հարգանքներով՝
ՎԱՆԿ ԱՆԵՐՅԱՆ
Արմենյանի սփյուռքահայ մանուկի համար լրատուության բաժնի վարիչ

Խմբագրության կողմից

«Ազգ»ի մարտի 2-ի համարով (թիվ 5) հրատարակել էինք Բոստոնում լույս տեսնող «ՊԱՅՔԱՐ» շաբաթաթերթի խմբագիր Գրիգոր Քեոսեանի «Ոգիին հետ նորոգել նախ բառամբերը» խորագրով ընտանական հողվածը, ուղղված Արմենյանին, հույս ունենալով, որ այնտեղ մատակարարված եւ շմտակարար թերթերը կարժանանան լրատու գործակալության լուրջ նկատառությանը: Դժբախտաբար, սակայն, ինչպես ցույց է տալիս կողքին լույս տեսնող բայ նամակը, լավատեսության նկատմանի հիմքեր չկան դեռեւս, հակառակ որ Գր. Քեոսեանի ընտանական թերթերը միակը չէին, հատկապես թերթախառն երեք օրաթերթերը, երեքն էլ պաշտոնաթերթեր մեր ազգային երեք կուսակցությունների, անցնող երեք տարիների ընթացքում շատ են ընտանական Արմենյանի լրատվությունների ձեւն ու բովանդակությունը: Փաստերի շուրջը խոսեմանով, պայմանաւրախ կեղծումների անպակիներն եւ անտեղի մեղադրանքներին դիմելու նույն գործելակերպը հույս չի ներշնչում մեր ազգային պետական լրատու գործակալության ապագա վերակառուցման նկատմամբ, թե՛ Վ. Սանթրյանի բայ նամակը արտահայտում է Արմենյանի պաշտոնական տեսակետը:

Չենք ուզում առանձին-առանձին անդրադասել բայ նամակի ինքնարդարացի փաստերին, դրանք մասին ընթերցողը թող դատի, սակայն կուսակցական առանձնայնեղ ընդամենը երեք կեա:

1. Նույնիսկ եթե գրում ենք աշխարհա-հոշակ երգիչ Շառլ Ազնաւուրի մասին, չի կարելի մեկ շաբաթվա ընթացքում 20-25 էջ հատկացնել նրան Արմենյանի տող հաղորդումներից, այն էլ՝ աղետից անմիջապես հետո: Էլ չենք խոսում Վ. Պաթյանի, Լ. Գաթրճյանի եւ այլոց հատկապես «հերթապահ» բազում էջերի մասին:

2. Չի կարելի մարդկանց արտաբանությունն ու վիրավածությունը շափել ուղարկված դուլարներով եւ կամ... Արմենյան այնպեւ լինելու կամ չլինելու փաստով: «Պայքար» թերթը, ինչպես սփյուռքի մեջ բոլոր թերթերը, եւ անմասն նրա խմբագիրը բիշ բախ չեն արել արդարյան «ժայթքումի» եւ երկրաշարժի աղետի օրերին արտերկրի հայության ուշքն ու դրամը դեպի Գայաստան ուղղելու գործում:

3. Իր բայ նամակում Վ. Սանթրյանը կործե է ձեռնում, որ Արմենյանը սփյուռքի հայկական թերթերին լուրեր է հաղորդում «անվճար, առանց շահի», կարծեք սփյուռքի թերթերը լինեն շահութաբեր ձեռարկություններ՝ որոնք դրամ են կուտակում Արմենյանի շնորհիվ: Դապա ի՞նչ էիք կարծում, Արմենյանը, ինչպես յուրաքանչյուր՝ լույսիսկ ամենախեղճ պետության պաշտոնական լրատու գործակալություն, ստիպված է «անվճար, առանց շահի» լուր հաղորդելու, ինչպես անում են, օրինակ, այլ հասարակություններ, որոնք «անվճար, առանց շահի» տված հեռագրերի միջոցով է, որ հայ ընթերցողն իմանում է, օրինակ, Ամասիայում եւ Ղուկասյանում վերջերս պատահած փոթորիկի մասին:



ՊՐՈՖ. ԳԻԹ ԼԱՍՈՒՐԻ ԿԸ ՀԱՅՏԱՐԱՐԷ ԹԷ ՍՈՐԳԸՆԹԱՍՈՒԻ ԳԻՐԹԸ ԱՆՎԱՆԵՐ Է

ՊՈԼԻՍ.- «Մարմար» օրաթերթը կը գրէ, թէ բրթական «Գիտնէշ» թերթը 9 դեկտեմբերի թիւին մէջ բաւական երկար հարցազրոյց մը նրատարակած է ամերիկացի պատմաբան պրոֆ. Հիթ Լաուրիի հետ, որ ինչպէս գիտենք, քանի մը ամիս առաջ Աճկարայի մէջ զեկուցում մը տուած էր Մորգընթաուի գրքին մասին եւ պնդած էր, որ Մորգընթաուի գիրքը իր գիտական արժեքը կորսնցուցած է: Պրոֆ. Լաուրի թուրքիս արեւելեան պատմաբան է: Աճ 1964-ին Բալթիկի մէջ ուսուցչութիւն ըրած է իրրեւրարի կամեցողութեան դեպքին եւ այդ միջոցին ամուսնացած է թրքուհի մը հետ, ապա մեկնած է Ամերիկա, ուր շարունակած է իր աշխատութիւնները:

Պրոֆ. Լաուրիի կարծիքով, Մորգընթաուի գրքին մէջ կասկածելի կէտեր կային եւ ինք սկսած է պրպտումներ ընել այդ մասին: Մորգընթաուի պատմութիւնը հայոց ծնողապաշտութեան պնդումներուն թիւ մէկ աղբիւրն է եւ ամբողջ աշխարհ այս գիրքը իր աղբիւր կը գործածէ ցեղապանութեան հարցի քննարկման մէջ: Միայն Ամերիկայի մէջ չէ, Եւրոպայի մէջ ալ, ուր որ երբանք, այդ գիրքը կ'սլլէ ձեր դիմաց: Մորգընթաու Ամերիկայի դեսպանը եղած էր 1915-1916

թուականներու միջեւ, ամբողջ 26 ամիս:
Պրոֆ. Լաուրի, Երբան Ազնաւուրի հետ իր հարցազրոյցին մէջ կը յայտնէ, թէ Մորգընթաու խեղափոխելու ոճով խօսած է թալէաթ փաշային եւ միւսներուն մասին: Օրինակի համար գրած է, որ «Թալէաթ փաշա վայրենի մարդ մըն էր, միւնչիւն մընք գիտենք թէ Թալէաթ փաշա իր ըզգացումները բողարկող, լուրջ, պաղարիւն մարդ մըն էր: Մորգընթաուի այս միտքը կասկած ներշնչած է իրեն եւ ինք սկսած է Ուաշինգթընի ազգային գրադարանին մէջ պրպտումներ ընել: Հոն Մորգընթաուի մասին 30-40 հազար էջ փաստաթուղթ գտած է: Այնտեղ կար նաեւ Մորգընթաուի մէկ նօթատետրը, որմէ յայտնի կը դառնայ, որ երկու անմիջական քարեկամներ օգնած են Մորգընթաուի, որպէսզի ան իր գիրքը գրէ: Ատոնցմէ մէկը հայ գրող Արամ Անտոնեանն է: Մորգընթաու իր նօթերուն մէջ կը գրէ, որ ինք շատ զբաղած է եւ իր յուշատետրը Անտոնեանին տուած է, որպէսզի ան արժեւորէ գանձը: Մորգընթաուի քով կար հայ խորհրդակցական մը եւս, Արշակ Երմանեանն: Ան ալ խորհրդակցական պարտականութիւն տանձնած էր: Ատոնք քարեկամական շատ սերտ յարաբերութիւններ ունէին Մորգընթաուի հետ:

Պրոֆ. Լաուրի կը պնդէ, թէ Մորգընթաուի գրքին հեղինակը իրականութեան մէջ ինքը չէ, այլ՝ Մարտոս Հեղորիք անունով ամերիկացի գրող մը: Այս վերջինը հի-

անալի եւ շատ համով ոճ մը գործածած է գրքին մէջ, այնքան որ գիրքը կարելի չէ ձեռքէ ձգել: Այս գրողը երեք անգամ Փուլիցէր մրցանակի արժանացած է:
Ատկէ զատ, ուրիշներ ալ միջամտած են գրքին: Օրինակի համար Ամերիկայի այդ շրջանի արտաքին նախարար Լեսիլը սրբագրութիւններ ըրած է գրքին մէջ: Մորգընթաու թուրքերուն մասին կը խօսի շատ քննական ոճով, իսկ Լեսիլը գրգռել է տղեղ յանելումներ կ'ընէ այդտեղ:
Այս բոլորն էլ հասկցուի, որ Մորգընթաուի գիրքն իրականութեան մէջ զերւած է չորս հոգինոց խմբակի մը կողմէ, որ կը քաղկանար երկու հայ օգնականներ, ամերիկացի գրող մը եւ Մորգընթաու: Ան նախագահ Ռիչարդին գրած է նամակ մը, որ կ'ըսէ թէ ինք պիտի գրէ գիրք մը որ շատ օգտակար պիտի ըլլայ նախագահին պատերազմի ի նպաստ կարծիքները արդարացնելու տեսակետ, տրուած ըլլալով որ ան գերմանացիները եւ թուրքերը ցոյց պիտի տայ իրրեւրարութեան ժողովուրդները:

Պրոֆ. Լաուրի իր երկար հարցազրոյցին մէջ կը յայտնէ, թէ այլեւս Մորգընթաուին գիրքը իր կարեւորութիւնը կորսնցուցած է, գրելու անութեան պնդումներու տեսակետ, որովհետեւ, կ'ըսէ ան, մեր առաջին աշխատութիւնները այն տպարտութիւնը կը թողնուին, որ այս գիրքը իրականութիւնը չի ցուցնում:

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 33.000 ԴՈՒՆՈՐ Է ՏՆԼԻՍ ԳՐԸ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՄԱՐ

Նյու Յորքի Իրանահայ միութեան նախագահ Վարուժան Հարությունյանը, փոխնախագահ Երվանդ Բալասանյանն ու քարտուղար Ռիթա Թաղուսյանը հունվարի 4-ին հանդիպելով ՀՔԸ Միութեան նախագահ տիկ. Լուիզ Մանուկյան-Սիմոնին, նրան հանձնեցին 33 հազար դոլարի չեք, որպէս օժանդակություն՝ երեսունու կերպրեկալ ու վերածնունդը միջազգային ու վարժողական կենտրոնի ստեղծման ծրարագրին:

ՀՔԸ Միութեան նախագահուհին իր շնորհակալական նամակում հայտնում է, թե դեռեւս երկրաշարժից 10 հազար վիրավորներ կարիքն ունեն գանձազան կարգի վերաբերական դարձնումների: Այս պատճառով է նաեւ, որ միութեանը որոշել է նրան կենտրոն ստեղծել երեսունու: Երկրաշարժից հետո ՀՔԸ Միութեան ծախսերով բուժման նպատակով Մ. Նահանգներ են տարվել 62 վիրավորներ:

ՀՔԸ Միութեանը երկու միլիոն դոլար արժողությամբ քարճորակ թժշկական սարքեր է հայթայթելու վիրաբուժական կենտրոնի համար: Ընդհանուր ծրարագրին համար նախատեսվում է 4 մլն. դոլարի գումար:

Ա Ն Ն Ա Խ Ը Ն Թ Ա Յ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՈՐԻՍԻ ՄԷՋ ԵՒ ՈՒՒՏԱ

Սիւնաց բնը աղօթքի եւ խոկումի երեք օրեր ապրեցաւ: Առաջին անգամ ըլլալով, արքեպիսկոպոսն ւր երեք թնակալ առաջնորդներ, շրջապատուած հոյլ մը վարդապետներով եւ քահանայ հայրերով, ճամբայ ելան Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն դէպի Սիւնաց լեռնային աշխարհը: Նըպատակըն էր ուխտի երթալ Տաթևի վանք, սոցելու համար Յովհաննէս Օճնեցի կաթողիկոսի, Յովհաննէս Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի եռամեծար վարդապետներու տօնը: Նպատակն էր նաեւ լման օր մը յատկացնել գիտաժողովի մը՝ նիւթ ունենալով ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԸ:

Եկեղեցականներուն խումբը կանց առաւ նախ Եղեզնածորի Նորավանք հռչակաւոր վանքը, ուր ամփոփուած են Սիւնաց բնմի մեքրապոլիտ եւ Սիւնաց աշխարհի մեծ պատմաբան Ստեփաննոս Օրբելեանի ածիւնները: Բլուրի լանջին, եկեղեցական թափօրը բարձրացաւ դէպի բարձունքը, ուր տիրական իրենց գեղեցկութեամբ մինչեւ այսօր կանգուն կեցած են երեք եկեղեցիները: Գլխաւոր եկեղեցիին մէջ, յանուն Ս. Կարապետի, բնմին դիմաց կատարուեցաւ պաշտամունքը: Ուրախութեան խառնած իրենց յուզումը, եկեղեցու վարդապետները փառք տուին Աստուծոյ, որ տասնամեակներու լուսնունդն ետք եկեղեցիին քարերը կ'արձագանքէին աղօթք ու փառաբանութիւն առ Աստուած, որ իրենց վիճակուեցաւ մեծ բախտը աղօթելու հոն՝ ուր դարեր շարունակ աղօթած էին կաթողիկոսներ, իշխաններ, առաջնորդներ եւ ժողովուրդ:

Պրոֆ. Գրիգոր Գրիգորեան, Սիւնաց եկեղեցիներու վիճակի արձանագրութիւնները հաւաքող եւ հրատարակող պատմագէտը, վերակոչեց հոյակապ շէքերուն պատմութիւնը եւ անգամ մը եւս կարգաց դասարաններուն արձանագրութիւնները: Ս. Կարապետ եկեղեցիին կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատուռը ծառայած է իբրև Օրբելեան տոհմի դամբարան: Այնտեղ պահուած է Բուրթլի աթիւմանան իշխանին դամբարանը, Ստեփաննոս Օրբելեանի եւ Ամբաստ իշխանի դամբարաններուն կողքին, որոնք արի վերականգնողները եղած էին Սիւնաց անկախութեան: Դամբարաններուն դիմաց կատարուեցաւ յատուկ հոգեհանգիստ մեր ժողովուրդի առաջնորդներուն եւ հոգեւոր հայրերու հոգւոյն համար:

Թատկապէս տպաւորիչ էր Ս. Աստուածածին երկյարկ եկեղեցին, հայ ճարտարապետութեան գլուխ գործոցներէն մին: Մարտու մը անցաւ հոգիներէն, երբ խումբ մը դայրոցականներ միացան ուխտաւոր խումբին, նոր կեանքով մը արթնցող յիշատակը մեր նախահայրերուն, որոնք կանգնած էին երկնասլաց տաճարները ի փառս Աստուծոյ:

Հիւրասիրուել էտք Եղեզնածորի մէջ, ուխտաւոր խումբը շարունակեց իր ճանապարհը դէպի Սիւնաց: Ժողովուրդը հաւաքուած էր արդէն յօրհանրող դարուն կատուցուած Ս. Յովհաննէս եկեղեցիին դիմաց, երբ թափօրը բարձրացաւ գերեզմանատան մէջէն դէպի տաճար: Վերջերս վերանորոգուած եկեղեցիին մէջ կատարուեցաւ հանգրտեան ծամու արարողութիւնը, որուն աւարտին քարոզեց Շիրակի բնմի առաջնորդ Գրիգ. Տ. Գրիգորիս եպիսկոպոսը: Պերճախօս իր պատգամով, ան ոգեկոչեց երեք մեծ սուրբերուն կեանքը, Յովհան Օճնեցիին՝ իբրև ութերորդ դարու աստուածաբան եւ կանոնադիր կաթողիկոսը, Յովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի եռամեծար Վարդապետները, որոնք տասնընդորրորդ դարուն վերաբանածուեցին մեր եկեղեցիին դասանակը եւ պաշտպանեցին Աստուծոյ հօտը օտարադասան քարոզչութիւններուն դէմ:

Եկեղեցականներու եւ գիտնականներու խումբը, հրաժեշտ անելէ ետք տեղույն պաշտօնական անձնատուրութիւններէն, ուղ-


ղուեցաւ դէպի Գորիս, ուր ընդունուեցաւ տեղույն ղեկավարութեան կողմ:

Շարք առաւօտ, մարտի 2-ին, Գորիսի քատրոնի շէքին մեծ արահին մէջ տեղի ունեցաւ գիտաժողովը: Սիւնաց բնմի Առաջնորդ Գրիգ. Տ. Աստղիկ եպիսկոպոս ողջունեց ժողովին մասնակիցներն ու ներկայ հասարակութիւնը բացման խօսքով մը, ուր ըսաւ. «Թող այս գիտաժողովը դառնայ օրինակ յետ այսու կազմակերպուելիք նման հաւաքութեան: Թող մեր ուխտն ու խոր-

գիտաշխատողներին հղում ենք Մեր ջերմաշին գնահատանքը եւ օրհնութիւնը:

ՎԱՅԳԻՆ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց»

Վեճափառ Հայրապետի ողջունի գիրը ընդունուեցաւ ծափերով, որոնց յաջորդեց Գորիսի քաղաքապետ պրն. Ղանլէթ Մկրտչիեանի բարի գալուստի խօսքը, ուր ան ըսաւ. «Սիւնաց բնմի «Հայկական Վանք» թնայնով Գորիսում գիտաժողովի կազմակերպումը՝ նուիրուած Սրբոյն Յովհան Օճ-



Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի. հոգեւորականներ, գիտնականներ եւ ուսանողներ:

նորները հաճելի լինեն Տիրոջը, որպէս բանատր ընծայ, իսկ եօթնալոյս վարդապետի՝ եռամեծար Գրիգոր Տաթևացու շքանշանները առատապէս տարածուեն բոլորիս վրայ»:

Գուգարաց բնմի առաջնորդ Գրիգ. Տ. Արսէն եպիսկոպոս կարգաց Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետին՝ ուխտագնացութիւնն ու գիտաժողովը հրաւիրող Գրիգ. Տ. Աստղիկ եպիսկոպոսին ուղղուած հետեւեալ նամակը.

